

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբարացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են տօն և չտօն օրեր:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

„ՄՇԱԿ“

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1879 թ.ին

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱՅՈՒ ԵՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՆԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐԻ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:
ԵՌԵՎԱՆԻ ՀԵՐԵՐԻՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքային ընտրութիւնները. — Ներքին տեսչութիւնը: Ներսէս Աղայեանի մասին: Նամակ Բագրի: Նամակ Վերին-Աղու-լիսի: Ներքին լուրեր: Արտաքին տեսչութիւնը: Տրանսիսի—(Մշակ) հեռագիրներ: Յայտարարութիւններ: Բանասիրական, Նամակ Երևանից:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՄԻՒՆԵՐԸ

Թիֆլիսի ընտրութիւնները հաւաքված են արդէն: Չայնաւորների առաջին կարգի ընտրութիւնները

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

7 դեկտեմբերի

Հնգր անգամ ասում են այդ անհրաժեշտ թիւերը: Թե՛ մեծամեծների դէմ բան մի գրէք, կամ գրում էք, գովեցէք, չորտորթեցէք, փառաբանեցէք, որովհետեւ այդ են սիրում նրանք, որովհետեւ ճշմարիտ գրողին ու խօսողին նրանք հալածում են, տեղից ու անունից զրկում են. բայց ումը կասես, դարձեալ չարտաւարում են գրել. կարծես թէ գրելը գրանց համար հացի, ջրի և օդի չափ կարկուռ ու անհրաժեշտ է: Տօ, բայց, դուք չէք խմայել որ «ճշմարիտը խօսողի գիտակց (գլխարկը) ծակ կը լինի», տօ ձեր ինչ գործն է թէ Մանուկներն չը գնաց, այլ ասացին հապեցէք, գնաց, նա էլ գնաց. ձեր ինչ գործն է թէ Էլմիաճին պրոկուրորը հոգսաման հղաւ: Ասացէք խնդրեմ, ձեր ինչ գործն է թէ մի օր էլմիաճին վեղարաւորները վասակովի դեղեղամանի չորջը վարդի թիֆլիսով կը դարդարեն և նրա հողուն կը խնդրեն որ ինչի իր նախորդի վրա, ձեր ինչ գործն է թէ Մանուկներն չեն վաճարում իր ձեռնաստան Սուքիաս եպիսկոպոսի հետ վաղուց կը լինէր Բեսարաբիայում, եթէ նրան ու-

երէկ, դեկտեմբերի 12-ին սկսվեցան:

Մենք աւելորդ ենք համարում կրկնել այն, ինչ որ շատ անգամ արդէն ասել ենք մեր քաղաքային ինքնավարութեան մասին: Մենք միշտ այն կարծիքի էինք որ մեր ինքնավարութիւնը միայն այն ժամանակ կատարելապէս կաջողվե, երբ ձայնաւորների մեծ մասը կը լինեն մեր քաղաքի ազգա-բնակչութեան փոքր ցենզին պատ-

դարկողները հաստատ մնային իրանց խօսքին. ձեր ինչ գործն է թէ պատերազմներն էլ վերջա-ցան, բայց Սուքիասի ու տէր-Յովսէփի գործերը չը քննվեցան:

Արտաքին, հազար ավտոս որ ոչ ոք իմ բարի խորհրդին չի հետեւել, էլ իր ձին է քը-չելու: Միթէ մի օր գրեցէք թէ Ներսէսի թեմի տեսուչը ռոճիկ չէ ստանում հոգևոր իշխանու-թեանց և մինչև անգամ լոկ ճանապարհածախս էլ չէ ստանում, որ գոնէ տօն օրերին կամ արձա-կուրդներին գնա, այցելէ մեր թեմի հիւանդ և կիսաքանդ դպրոցները, ասացէք խնդրեմ, ինչ օգուտ կը ստանաք այդ տեսակ յայտարարու-թիւններէ: Կարծում էք որ հոգևոր իշխանու-թիւնը ձեր յօդուածը կարգաւորն պէս 3000 ռուբլի ռոճիկ կը նշանակէ թեմի տեսչին, կար-ծում էք որ կը պահանջէ հոգևոր իշխանութիւնը, որ թեմի տեսուչը պարտաւորվի կատարել իր պաշտօնը, համաձայն վեհափառ Կաթողիկոսից հրատարակած հրահանգի 10-դ յօդուածին, ուր ասած է. «Թեմական տեսուչն պարտի ջա-նալ, զի բացին ծխական դպրոցք ամենայն ու-րէք, գոնէ իւրաքանչիւր գիւղս մէն մի, իսկ ի քաղաքս և ի բաղնիսմարդ աւանս երկու և աւելի, ըստ թւոյ եկեղեցեաց...» կամ թէ. «Թեմ տե-սուչն գումարէ ի տարւոյ երկուցս գնականաւոր-ծական ժողովս յօգնականաց իւրոց և այլն...» Եթէ դուք կարծում էք որ այս ամենը գրված է կատարվելու համար, ես ձեզ կասեմ որ զօր ինչ կարծէք, կարծէք, դպրո մի կարծէք: Տօ, ամեն գրուած որ կատարվէր խօ քաղաքի վրա չէր մնայ. մի օրում աշխարհս կամ կը քանդվէր կամ կը չինվէր. այս ամենը գրված է ձեր հա-մար, ասպաղայ պատմաբանի համար որ կարգա-ու ասէ. հայոց դպրոցները 19-դ դարի երկրորդ կիսում ծագելու և բարեկարգ վիճակի մէջ են

կանող անձինք, այսինքն այնպիսի անձինք, որոնք աւելի մօտ լինե-լով ժողովրդին, քան թէ ունեւոր-ները, մեծ ցենզ ունեցողները, ա-ւելի էլ ընդունակ են լինում հա-կանալ ժողովրդի կարիքները, ու-րեմն աւելի լաւ էլ կարող են պաշտպանել ազգաբնակչութեան տնտեսական և հասարակական պահանջները:

Մեզ կասեն թէ մենք ուշա-ցունք մեր յօդուածով: Սորան մենք կը պատասխանենք որ դեկ-տեմբերի 12-ի, այսինքն ձայնա-ւորների առաջին կարգի ընտրու-թիւնները մեզ առանձին չեն հե-տաբերում: Այդ բաժնից ովքեր կընտրվեն, մենք արդէն կարող էինք սկզբից գուշակել. բացի մի քանի անուն ունեցող անձինքնե-րից, որոնք պատկանում են ըն-տրողների ուրիշ բաժիններին և որոնք, եթէ այդպէս կարելի է ասել, պատահամբ են ընտրվում առաջին բաժնի մէջ, մնացածները մեծ մասամբ պատկանում են միշտ մեր ազգաբնակչութեան ունեւոր դասին, այն խոշոր ցենզի ներկա-յացուցիչներին, որոնք, շատ քիչ բացառութեամբ, անտարբեր ոգով

են վերաբերվում դէպի քաղաքա-յին շահերը, գրեթէ չեն էլ յա-ճախում Դումայի նիստերը: Նը-րանց համար գլխաւորապէս փառք է հարկաւոր, որ նրանք քաղաքի ձայնաւորներ են:

Ուրեմն մեր յօդուածը իսկապէս չէ ուշացիւ, որովհետեւ առաջին կարգի ձայնաւորների ընտրու-թիւնը մեզ այնքան չէ հետաքը-քրում: Մեր յօդուածով մենք դի-մում ենք ընտրողներին երկրորդ և երրորդ կարգերի: Նրանց ա-ջող կամ անաջող ընտրութեանց է կախված Դումայի աջող կամ ա-նաջող կազմակերպութիւնը:

Իսկ Դումայի կազմակերպու-թեանց է կախված քաղաքագլխի ընտրութիւնը:

Եթէ Դումայի կազմակերպու-թիւնը անաջող է, ինչքան էլ հմուտ քաղաքագլուխ ընտրվի, դժուար թէ նա կարողանայ մեծ գործ տեսնել: Եւ Դումայի անա-ջող կազմակերպութեան ժամա-նակ դժուար էլ է սպասել որ ըն-տրվի օրինաւոր քաղաքագլուխ:

Բայց ուրիշ կողմից մենք հա-մաձայն չենք այն կարծիքի հետ, որ եթէ Դումայի կազմակերպու-

կողմ, բայց որ երեսնի մէջ այդ կարգաւորութիւնը չէ լավում, չէ կատարվում, խեղճ տէր-Յովսէփը հեղեմների 18-ից Սինդի № 2433-դ հրամանի պահանջովը Էլմիաճին է տարվում իր կամ-քին հակառակ, և յետ է դառնում, հասարակա-կան ընտրութիւնները խափանում, հին հողա-բարձուհիներին պահում և ինքը մնալ իր երեք հոգաբարձուհիների հետ մի չորրորդ հոգաբար-ձուհի ընտրում, օրագրութիւն կապացնում և դէպի Էլմիաճին ուղարկում, ասելով որ այսպէս է հրամայել ինձ վեհափառը. ասենք թէ այս բոլորը սառը ջուր է մաղում հասարակութեան վրա, ժողովրդի սիրտը պաղեցնում է դէպի իր դպրոցը, որին պահում է նոյն իսկ հասարակու-թիւնը և ոչ տէր-Յովսէփը ու իր նման անաւոր-ները. վերջապէս, ասենք թէ այդ բոլորը զոյգ է տալիս իմ ասածի ճշմարտութիւնը թէ. «մեզա-նում ամեն ինչ ձեր համար է», ուրեմն հասա-րակութեանը արված իրաւունքն էլ է ձեր հա-մար. բայց ինչ պէտք է արած, միթէ արժէ պա-պիսի ջնջին բաների համար ժամ ու ժամանակ կորցնել, յօդուած գրել, փող մսխել, փոստան փշել և ուղարկել ապօրինի. կամ որ ապօրինի ինչ օգուտ կը ստանամ ես, բայց յանդիմանու-թեանց ու սպառնալիքներից: Մարդ շատ բան կիմանայ, շատ բան կը լսէ ու կը տեսնէ, բայց պէտք է խոհեմ լինի, պէտք է տեսածը չը տե-սած համարէ, լսածը չը լսածի տեղ դնէ, իր հա-մազմունքները իր համար պէտք է պահէ, որ հարցնեն թէ, եղբայր մօտիցդ ուղղ անցկացաւ, տեսնաւ. ասէ. չէ, տեսայ ոչ, պրծաւ գնաց: Այ ինչ կասեմ մեր Հին-Բարեկամին. մի քանի բան դուրս տուաւ գլխիցը, բայց հէնց որ պոչը սրը-մեցին, ձայնը կարկուռ ու անհետացաւ. թէ որ էլ լսէք նրա ձայնը, ինչ ուղեք կը տամ. Աս-տուած իր հետ:

Թիւնը լաւ է, մի և նոյն է թէ ով լինի քաղաքագլուխ, թէ կուզ առաջին պատահած անկիրթ մի անձն....

Մենք դիմում ենք մեր քաղաքի երկրորդ և երրորդ կարգի ընտրողներին, յիշեցնելով նրանց, որ նրանց տուած քուէներին կախված է Դումայի վատ կամ լաւ կազմակերպութիւնը, իսկ Դումայի կազմակերպութիւնից կախված է օրինաւոր քաղաքագլխի ընտրութիւնը:

Թող չը մոռանան մեր ընտրողները, որ գալու չորս տարիները գուցէ ամենադժուար տարիները լինեն մեր ինքնավարութեան գոյութեան համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԻՐԻԵՎՍԿԻՆ ՍՊԱՆՍԱՆ ԳՈՐԾԸ

Պաշտպանի ճառի շարունակութիւնը: Պաշտպանը սկսում է քննել այն շաւիղը, որ ամենուրեք է Անդրիկովսկիների տանից դէպի Կուր գետը: Նա ասում է թէ մի անգամ ինչից այնքան այդ տեղը և գտնում է թէ դէպի գետը ամառը շաւիղով բոլորովին զբաւար չէ իջնել: Բուցե այն ժամանակից, երբ Անդրիկովսկիների տանը տեղաւորվեցաւ Կարմիր Նաչի ընկերութեան հիւանդանոցը, այդ շաւիղը լայնացրին: Բայց եթէ շաւիղը այն ժամանակ վատ էր, և դժուար էր նրանով անցնել զիցուք մի յիսուկ տարեկան մարդուն, մի նորահաս տղակայ համար, որ ուժեղ է, ճարպիկ է, որ սաղններում չէ մեծացած՝ կարող է ոչինչ դժուարութիւն չը ներկայացնել: Զը պետք է մոռանալ որ զրգաբաղը անցքից յետոյ այդ շաւիղով կարողա-

ն ցաւում եմ նրա համար: Ճեւ գիտեմ որ զրել նրա համար այնքան սիրելի էր, ինչքան որ մեր դերասանների համար սիրելի է բեմը: Գիտեմ որ նա իր համեստ յօդուածները հասարակութեանը ներկայացնելուց աւելի էր ամաչում, քան թէ մեր դերասանները իրանց սրտով փոխանով բեմ դուրս գալուց: Գիտեմ նոյնպէս որ նրա յօդուածներ կարգադրողների թիւը նրանի մէջ աւելի մեծ է քան թէ մեր դերասանների խաղերին ներկայացնողներին թիւը, բայց և այնպէս, նա լսեց ինձ, յետ քաղցից հասարակական բեմից, իսկ մեր դերասաններից չատերը բնաւ չէր լսել իմ բարի խորհուրդները, եթէ ասեմ նրանց որ բեմը դուրս գալիս դերերը լաւ սովորեցէ՛ք, եթէ ցանկանում էք որ յաճախողներ ունենաք: Բայց այս բանը ես չեմ ասում, որ բարեկանք ու հայտնէք ինձ, պարոն դերասաններ, ես նրա համար եմ ասում որ օրինակ առնէ՛ք թատերասիրաց խմբից, ասեա՛ք պ. պ. Նաւասարդեանցին, Զալալեանցին, Սարգսեանցին, տեսե՛ք աս. տ. Զալալեանցին, Սիմոնեանցին և օր. Տէր-Գրիգորեանցին, ինչու էր նրանց խաղին մասնութանոց տոմսակի գինը երեք մանէթի բարձրացել, ինչու էր թատրոնը պիւնը լցվել և հարկուրաւոր մարդիկ ինչու էին առանց տոմսակի մնալով, առնէ վերադառնում, և ինչու են ձեր խաղերին դատարի նստարանների վրա մկները պարզալիս: Այդ նրա համար է որ դուք կարծում էք թէ ինչ որ առաջարկէ՛ք, հասարակութիւնը կընդունէ. սխալ էք: Ինչ կը լինէր ձեր ճարը, եթէ որ տաք-զուրկ յօդուածագրերից մէկը վերցնէր ու նկարագրէր ձեզ ձեր յատուկ արժանաւորութիւններով և ուղարկէր տպվելու. տեսէ՛ք, ես ձեզ համար դեռ ես չեմ խոսում և սպասում եմ որ ձանաչէ՛ք դուք ձեզ: Մինչև անգամ չեմ էլ կամենում ասել որ ձեր բաղդաւոր պա-

ցան, թէ եւ գուցէ դժուարութեամբ, իջնել այնպիսի հասակաւոր մարդիկ, ինչպէս եղբայրներ Ձևոտաւ, պ. պ. Յիւստիգորով, Մէլքե-Բէգլարով, Իսաբով: Իջնել այդ շաւիղով անհարկն էր ուրեմն, հարկաւոր չէր հրաշքներ գործել կամ ունենալ ակորբատական ընդունակութիւններ, այլ միայն ունենալ առողջ կազմուածք, ճարպիկ լինել և սովոր լինել սարսու տեղերի վրա մանդալուն: Իշխանուհի Քումանով նոյնպէս վկայում է որ Նինա քանի մի անգամ իջած է այդ շաւիղով, հետաքրքրվելով իմանալ որտեղ են լուղանում: Մինչև անգամ նահանգական դատարանը անհարկն չէ համարում այդ շաւիղով անցնելը:

Յեւոյ պաշտպանը մանրամասնաբար ներկարգում է թէ ինչ դրութեան մէջ զընան վեցան գետի ափում օրիորդի շորերը, և իշխեններ: Նրանք այնպէս էին դարձած, ինչպէս դարձում է լուղանալու պատրաստվողը: Բայց վկաները ասում են թէ կոչիկների տակերի վրա ցեխի հետքերը չէին երևում, իսկ իրանք երբ իջան, բոլորովին կեղտոտվեցան: Այդ հասկանալի է: Շաւիղի վրա հոսող աղբիւրի վայրով եթէ մի մարդ անցնի, այն էլ մի անգամ միայն, նա կարող է իր կոչիկները շատ շատ թաց անել, բայց ոչ թէ ցեխոտել: Բայց երբ վկաները իջնում էին շաւիղով, այն ժամանակ արդէն այնքան գնալ ու գալ էր եղել այդ նեղ շաւիղով, որ բոլոր անցնողները իրանց ոտներով անհաս գիտէին արեւ աղբիւրի խաղաղ հոսանքը, խառնել էին ջուրը հողի հետ և շաւիղի անցքը ցեխ էին դարձրել: Գուցէ կասե՛ն որ օրիորդի կոչիկները գտնէ թաց պետք է լինէին: Բայց վկաները և քննիչը այնքան ուշ էին եկել, որ կոչիկները կարող էին բոլորովին ցամաքել: Կոչիկների տակերի վրա կային բոյսերի հետքերը, կային կանաչ բիծեր, որ ապացուցանում է թէ օրիորդը անցաւ շաւիղով դէպի գետի ափը, որովհետեւ այդ ճանապարհի վրա կայ ջրային բուսականութիւն, բայց կոչիկները հազար ու մի ձեռքերով անցնելով, սկզբնական բիծերը ջնջվեցան:

(Կը շարունակվի.)

Բաղդաւոր մեծ անխառնութիւն է անում աղբաւիկ Սահականուչեան օր. դպրոցի դէմ, երբ նրա օգուտի խաղաղվածի եկամտից բաժին է ստանում: Նա մոռանում է որ այդ բեմ չինողը նրանի ամբողջ հասարակութիւնն է և արեւիւնքն էլ պետք է լինի նրանի հասարակութեան բոլոր օրդոց օգուտին և ոչ թէ մի քանիս: Ներին միայն: Մոռանում է ձեր պարագլուխը, որ այդ բեմը մի մասնաւոր անձի բեմ չէ և եթէ լինէր էլ, այն ժամանակն էլ Կոնդի թաղական օր. դպրոցը պետք է իրաւունք ունենար այդ բեմի արդիւնքից մասն ստանալու, որովհետեւ այդ ամբողջ դպրոցի շինութեանը և բեմի էլ մեծ մասը կոնդիի պատուաբաժան Կոնդի Ղազարեանի շնորհիւն է գոյացել: Եթէ որ բեմը չինելուն կոնդիցը ես մասնակից եմ եղել և այն էլ մեծ մասը չինել, ինչու պետք է նոյն թաղի օրիորդներին զրկել: Ինչու երբ որ ճինդ ու վեց անգամ Գայիանեան դպրոցի համար կը խաղաղվէ, մի անգամ էլ Սահականուչեանի համար չը խաղաղվի: Բայց այս մասին ես ես լուում եմ, որ ձեր խիղճը խօսէ, հասարակութեան հասկացողները մոռանեն և Վահագնաւոր հասկացնեն բանի էութիւնը:

Կը ցանկայիր որ մեր քաղաքի մեծամեծները ժողով կազմէին, և ժողովով օրագրութիւն կայացնէին ու Վահագնաւոր կաթողիկոսից իրաւունք ստանային որ այսուհետեւ նրանի աղբաւիկի դպրոցները օգուտին ներկայացուցին տալիս, բեմի համար առանձին վարձ չը տրվէր. կամ գտնէ եթէ երկու անգամ Գայիանեան դպրոցի օգուտին տրվէր, մի անգամ էլ Սահականուչեանի և միւս անգամին էլ թեմական դպրանոցի օգուտին տրվէր: Ներկայացուցումը կամ թէ, ներկայացուցնելից կայացած օրդոց 3 մասը լինէր, երկու մասը Գայիանեան դպրոցին, իսկ մի մասը

ՆԱՍՏԱԿ ԲԱԳՈՒՅՑ

6 դեկտեմբերի

Միաբանական գործունէութեան գաղափարը հայոց մէջ էլ մտնում է, մի քանի տեղեր, ինչպէս կարգում և լուում են, արդէն կան և կազմակերպվում են զանազան ընկերութիւններ, որոնք միմեկարար կերպով են մեր հասարակական կեանքի մէջ: Բայց ցաւելով պէտք է ասենք, իր այս մեծ գաղափարը միայն սկզբնաւորելու և հիմնադրի ու հեղինակ հանդիսանալու ճգնաժամի մէջ է արտայայտվում: Մի տեղ օգտակար ձեռնարկութեան հիմք են դնում, չատերը սկզբում համակրում և շրջապատում են նրան, բայց չուտով հովանավորում և հեռանում, իսկ շատերն էլ կամ սկսում են այլ նոյնանման ձեռնարկութիւն հնարել և կամ աշխատում սրկուածի արգելքները շատացնել, որովհետեւ նրա հեղինակը կամ սկզբնապատճառն իրանք չէին: Փառասիրութիւն և անմահանալու ցանկութիւն ամենքն ունեն, բայց միթէ դուրս համար բոլորն էլ պէտք է հեղինակ դառնան, միթէ չինում է մէջ իւրաքանչիւր մի քար աւելացնողը նրա հիմնադրի փառքին և պարծանքին մասնակից չէ: Մեր ընկերութիւնները եթէ տարբեր նպատակներով և միջոցներով կազմվէին՝ ոչինչ չէինք կարող ասել, այն ինչ եթէ այժմ լաւ քննեք գրեթէ բոլորն էլ մի և նոյն նպատակն ունեն, ուստի արդեօք մեր կողմից աւելի խելացութիւն և հեռատեսութիւն չէր լինի արդէն եղածներից մէկը կամ երկուսը միացնել ոյծերով ապահովել, զարգացնել և պտուղները վայելիլ քան թէ նորերը ստեղծելու համար ժամանակ և աշխատութիւն վատնել: Ի՞նչ հեռու գնամ, մինչև անգամ այստեղ, ուր (Մարգար. Ընկերութիւնը) կայ, միայն ընկերութիւն ես իր համար գոյութիւն ունի բար և գործ աշխու կամ աղքատաց անուամբ, որի բուն խորհուրդը չը գիտենք թէ ինչ է:

Մարգարեական Ընկերութիւնը պետութիւնից վաւերացած և նրա հովանաւորութիւնը վայելող մի հաստատութիւն է, որ հիմնվել է «առաջադատակ հայոց մէջ, առանց զանազանութեան կոչման և դաւանութեան, լուսաւորութիւն և բարեգործութիւն տարածելու համար». սա ընդարձակ զարգացման ընդունակ է. կարող է իր սեփական դպրոցներ ունենալ, բազմաթիւ սաներ պահպանել ուրիշ ուսումնարաններում. կարող է ձեռք բերել ամենատեսակ անշարժ և շարժական կաշքեր, ամեն տեղերում իր գործակալներ կամ բաժանմունքներ ունենալ. կարող է իր կատարները փոփոխութեան ենթարկել և օրըստօրէ կատարելագործել ու լրացնել, երբ թերութիւնները նշմարվեն: Վերջապէս կանոնադրութեան Յօդ. յօդուածը թոյլ է տալիս ընկերութեանը իր գործերի վարչութիւնը, հարկը

ալ Սահականուչեանին տրվէր: Իսկ երբ որ ուրիշ նպատակների համար լինէր ներկայացումն, այն ժամանակ միայն բեմին առանձին վարձ տրվէր: Կամ թէ, հաստատ խմբի ներկայացումները յօդուտ Գայիանեան դպրոցին լինէին իսկ թատերասիրաց խմբի ներկայացումները, եթէ միւս ազգային դպրոցների օգուտին լինէին, բեմը չառնէր վարձ այդ դէպքում: Եթէ այս էլ չը լինի այն ժամանակ ես իմ սեփական փողերով, կամ իմ բարեկամ Մարգարե Անանովի հետ միասին, քաղաքի մէջ տեղում մի լաւ թատրոն կը շինենք Սահականուչեան դպրոցի համար, ձեր վատութիւնն էլ ձեզ կը մնայ: Ասում եմ չը բարկացնէ՛ք ինձ ու իմ բարեկամին, եթէ ոչ մի անգամ որ քսակներս բերանը բռնանալ, ոչ միայն թատրոն կը շինենք ազգային դպրոցների օգուտին, այլ և նոյն դպրոցների համար դասագրքեր պատրաստողների մի լաւ խումբ էլ կը կազմենք և օրինաւոր դասագրքեր կը հրատարակենք (Մայրենի լեզուն) ուսուցանելու համար, թուրքաբանութեան ու երկրաչափութեան համար, պատմութեան ու աշխարհագրութեան համար, բնական պատմութեան, բանասիրութեան և բնաւորութեան համար, մասնաւոր ազգային պատմութեան, լեզուի, կրօնի և մեր երկրի աշխարհագրութեան համար, որոնցից բոլորովին դուրի են մեր դպրոցները. բայց մենք էլ մեր շինած գրքերից ձեր դպրոցներին չենք տալ, որովհէ պ. պ. թատրոնատերեր... Բայց պիտի գիտենաք որ եթէ նախապատրաստական համար լեզուի դասագրքեր չինելու լինենք, ոչ պ. Տէր-Ղևոնդեանցի պէս առանձինից բաւական թարգմանութիւններ կանենք, ոչ ամեն նոր տպագրութեան ժամանակ յօդուածները յետ ու առաջ կը դնենք և անունը բարեւաւարած կը դնենք, ոչ էլ Սեդրակ Մանգլի-

պահանջած ժամանակ տեղափոխել և կենսորոնացնել: Անդրկովկասի մի այլ քաղաքում: Սորա-նից աշխարայ երևում է, որ այս ընկերութիւնը միայն Բագուի համար չէ. բոլոր առասպալիքը անխաբիր իրաւունք ունեն սրա բարիքը վայելելու. բայց ուր տեսնված է իրաւունք առանց պարտքի: Ընկերութիւնը Բարձրագոյն հաստատութեան արժանանալուց յետոյ 15 երկար տարիներ են անցել, բայց դեռ մինչև այսօր Թիֆլիսի, Մոսկվայի, Պետերբուրգի, Նոր-Նախիչևանի, Ղազարի, Աստրախանի, Նրեանի, Շուշու և այլ տեղերի հարուստ և լուսաւոր հայերը արժան չեն համարել լուրջ ուշադրութիւն դարձնել սրա վրա և գործի նիւթական ու բարոյական օժանդակութեամբ ընդարձակել սրա գործունէութեան շրջանը: Մի քանի տարի առաջ Ընկ. խորհրդի այս նպատակով հրատարակած շրջաբերակումը, ինչպէս լսած եմ անդամներից, սառն ընդունելութեան է հանդիպել հայերի մէջ. այնքան հրաւէրի և խնդրաւորի արդիւնքը շատ աննշան է դուրս եկել:

Մի ցաւալի իրողութիւն էլ այն է որ մեր այլաբան եղբայրները մինչև այժմ համարեա թէ չեն մասնակցել այս ընկերութեան ոչ օգուտ տալով և ոչ ստանալով, այն ինչ հիմնադրի ամենամեծ ցանկութիւնն է եղել մի մօր հարազատ դաւաններին երբէք չը բաժանել միմեանցից, այլ ամենքին հաւասար աչքով նայել: Այս կարևոր զանցառութեան համար Ընկ. հասկացող անդամներն են պատասխանատու, նրանք պետք է հոգային յատկապէս ոչ զիմեք և հրաւիրել բոլոր այլաբան հայերին Ընկերութեանը մասնակցելու: Եթէ քրիստոնեայ և մահմետական վրացիքը, որոնք տեղի և դարերի ահապին տարածութեամբ բաժանված էին իրարից, ժամանակի պահանջը հասկանալով այնքան սիրով ու ողորդութեամբ զրկախառնում են միմեանց, հա՛րկիս ինչ է եղել, միթէ մեր մէջ սէրը և միաբանութիւնը մի քանի աննշան ծէսերի և խորութիւնների զոհ բերող անձինք կը գտնվեն. չեմ կարծում:

Միւս հասարակութիւնների մէջ Գանձակը մի բացառութիւն է, ուր պ. Ն. Տէր-Ներսէսեանց իր կոչմանը հաւատարիմ մնալով աշխատում է Ընկերութեան համար, թէ և ժողոված դուռներից շատ բան չէ ուղարկում Բագու, բայց այն մի և նոյն է, ուր և որքան էլ ծախսվի Ընկերութեան անունով և սրա նպատակի համար է, ընդհ. ժողովի վճռով: Փառք Աստուծու, մենք հարուստ ենք այնպիսի հոգեւորական և աշխարհական անձերով, որոնք կարող էին այս ընկերութեան ծաղիկուն նիւթագլուս ու բարոյապէս ձեռնադրել: Ինչ կը լինէր, որ շատերը պ. Տէր-Ներսէսեանցի գեղեցիկ օրինակին հետեւելով և իրանց տեղերում եւ բաժանումներ հաստատելով (Մ.

նեանցի պէս գաւառական խառն խումբ բարբառներ կընծայենք, որք ամենաբարձր դաստանց աշակերտներին կը վայելէ, իբրեւ բարբառները իմաստասիրելու: Մենք կաշխատենք որ մեր դասաքրքի լեզուն լինի գրականական, միակերպ և մաքուր աշխարհաբառ, թէպէտ և մեր յօդուածի մէջ այդ չէ երևում, որովհետեւ չենք էլ ցանկանում որ երևայ, ինչ կը վերաբերի միւս գիտութեանց դասաքրքերին, մենք կաշխատենք լուսաւորեալ ազգերի բարեկարգ դպրոցներում գործածվող ընտիր դասաքրքերը հայերէնի թարգմանել, պարզ աշխարհաբառ լեզուով, քանի որ ինքներն տաղանդ չունենք աւելի լաւ երբ յօրինելու: Այս կը յաջողվի մեզ արդեօք թէ ոչ. այդ մասին կարող եմ ձեզ հաւատացնել որ կը յաջողվի. որովհետեւ ես այն օրը գնացի պ. Գեորգեանների ապարանը, մոտիկ տուի այնտեղ տպված նոր ձեւի Նիփեմիդիան կամ պ. Էմին-Տէր-Գրիգորեանցի աշխատասիրած Պատգամասուրը, որը բացվեց այսպէս. «Որն բարի է, երազը ի հրեւր տարին կատարի» Ներկորդ անգամ ես բաց արի, ասաց. «սպասիր մինչև 81 թուականը» երրորդ անգամ բաց արի, ասաց. «մեր ազգին պատգամախօսներ են հարկաւոր» և իրաւ. «Հիսուածք—բանից»—ի պէս գրքերը մեզ հարկաւոր են, բայց առաւել եւս Նիփեմիդիան—պատգամախօսներ. կեցցէ հեղինակը: Միայն չատ ամիսս որ առաւ—տաճկական պատերազմից առաջ չէր հրատարակված, որ մեր ազգի մեծերը կարգային և հասկանալիս թէ ինչ պիտի լինէր մեր ազգի վիճակը պատերազմից յետոյ:

Ա.

Ընկերութեան զարգացմանը նպաստելին, թէ և ժողոված գումարի մեծ մասը տեղական պէտքերի համար գործածելով: Ինչպէս մեր վիճակաւոր առաջնորդներն ու գրեթէ բոլոր եպիսկոպոսներն անփութիւն անգամ չը լինեն սրան և իրանց կողմէ չաշխատեն անգնել անդամներ թիւը մի-թէ ամբողջ Ռուսաստանում մի 100 հոգի չեն ձարկի, որ պատուաւոր անգամ գրվին 1000-ական թուրքի տարով: Ըստ ինչպէս են նրանք ցուցած միջոցներով ոգևորված շատ անգամ մեծամեծ գումարներ զոհում: Եւ համարված եմ, որ ազգի մէջ շնորհաւորութիւնը և առատաձեռնութիւնը պակաս չեն, բայց այս առաքելի յատկութիւններն արծարծող և խրախուսող չը կայ: Խոչար եկեղեցականները ու աշխարհականները բոլորովին ազգային գործերում չեն խառնվում, որ մի անբաղաւորութիւն է մեզ համար, իսկ մանրերը գործելու միջոցներից զուրկ են: Ս. Էմմանուէլը ևս իրան շատ թանգ է ծախում, և իր յորդորներն ու օրհնանքը այն ժամանակն է առատացնում երբ որ և ինչ նուէր է ստանում. միթէ նա պարտաւոր չէր առաջ կամ գոնէ այժմ քաղաքի կողմէ ժողովուրդին այս Ընկերութեան առաջադիմութեանը նպաստելու համար. թող հաւատայ ս. Աթոռը, որ այսպիսի ընթացքը իրան ևս մեծապէս օգուտ կը լինէր: «Մ. Ընկերութիւնը» միջոց կունենար այն ժամանակ ճանաչում աւելի որդեգիրներ ունենալ քան այժմ, և անդամները պարտք կը համարէին իրանց կողմէ ևս փութադարձաբար օգնել ս. Աթոռին ամեն տեղ նրա շնորհ և ներշնչութիւնը պաշտպանելով: Երբ նրա համար էական նշանակութիւն ունի, եթէ ընդհանուր աշխատութեամբ ջանանք Ընկերութիւնը շուտով նիւթապէս հարստացնել, այն ժամանակ նա կարող կը լինի զարգացած նախագահ և ատենադպիր ևս ունենալ, որոնք առատ ռոճկով ապահոված լինելով, իրանց բոլոր ժամանակը և գործունէութիւնը Ընկերութեան առաջադիմութեանը նուիրելով, մեծամեծ օգուտներ կը բերեն ազգային լուսաւորութեանը: Իսկ այժմեան չնչին միջոցներով ինչ կարելի է անել, անհնարին է պահանջել, որ այս ինչ կամ այն ինչ արժանաւոր մարդը (որ պիտիքը ըստ մեծի մասին աղքատ են լինում) համ իր ապրուստը նուրայ, համ էլ ձրիաբար ընդհանուր գործին նուիրվի բոլորովին:

«Մարզ. Ընկերութեան» էութիւնը գուցէ դեռ չատրին լաւ ծանօթ չէ, այս պատճառով հասկնաւորութեան մի քանի յօդուածները:

§ 1. Ռուսաստանի հայերի մէջ, առանց զանազանելու նրանց կոչումը և դասան ու թիւը, լուսաւորութեան և բարեարարութեան գործեր տարածելու համար Բագու քաղաքում հիմնվում է «Մարզաւորական Ընկերութիւն» յանուն ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի:

§ 2. «Մարզաս. Ընկերութեան» գործերի վարչութեան տեղը Բագու քաղաքն է: Իսկ նիւթական միջոցների անեղծը յետոյ, Ընկ. գործերի վարչութիւնը Անդրկովկասեան երկրի մի այլ քաղաքում էլ կարող է կենտրոնանալ, միայն եթէ Ընկ. անդամների մեծամասնութիւնը սրա համար իր համաձայնութիւնը յայտնէ:

§ 4. Ընկերութիւնն իր հիմնարկութեան նպատակին համաձայն եղած իր բոլոր գործողութիւններն մէջ վայելում է օրէնքների հովանաւորութիւնը. նրա հետ միասին և ստորադրվելով կայսրութեան միջի ընդհանուր օրէնսդրութիւններին չառատար այլ նոյնատիպ ժողովների կամ հաստատութիւնների:

§ 8. Այս կանոնադրութեան ամեն փոփոխութիւն կամ լրացումը թոյլատրվում է ոչ այլապէս, բայց միայն Տէրութեան վճռահատութեամբ, Ընկերութեան միջնորդութեամբ, որը հիմնված լինի նրա ընդհանուր ժողովի կարգադրութեան վրա:

§ 10. Պատուաւոր, անփութիւն, և տարեկան անդամների թիւը սահմանափակված չէ: Այս անդամների կողմը կարող են մտնել ամեն հոգ անձինք, որոնք գտնվում են Ռուսաստանի հրապարակական ներքոյ, առանց նրանց կոչման, վիճակի և դասանութեան զանազանութեան:

§ 12. Միացեալ անդամների կոչման հետ կապվում են դրամական կամ նիւթական նուիրարեթիւններ յօդուած Ընկերութեան հետեւեալ չափով. պատուաւոր անդամները միասնապէս և ընդ միշտ նուիրում են ոչ պակաս քան հազար թուրք. անփութիւն անդամները նուիրում են միասնապէս և ընդ միշտ ոչ պակաս քան հարիւր թուրք. տարեկան անդամները նուիրում են

իրարանջիւր տարի ոչ պակաս քան հինգ թուրք: § 13. Ընկերութեան անդամների ընդհանուր պարտականութիւններն են նրա բարեարարական գործողութիւնների զարգացմանը նպաստաւոր տոյց լինելը:

§ 14. Ընկերութեան անդամները վայելում են հետեւեալ իրաւունքները. 1) նրանք ներկայ են գտնվում Ընկերութեան ժողովներում և, խոր-խորդի հրաւիրմամբ, մասնակցում են նրա նիստերին խորհրդակցական ձայնի իրաւունքով: 2) նրանք առաջարկում են խորհուրդին այն անձե-րին, որոնք ցանկանում են Ընկերութեան ան-դամներ լինելու: և 3) նրանք բերանացի կամ իրաւոր առաջադրում են Ընկերութեան գոր-ծերի կարգաւորութեան վերաբերեալ իրանց դատողութիւնները:

§ 15. Խորհուրդի մէջ բոլոր գործերը ձայների առաւելութեամբ են վճռվում....

§ 26. Ընկերութեան ընդհանուր ժողովը լի-նում է տարին մի անգամ: Նրան գումարում է խորհուրդը յունվար ամսին մէջ վարդաբ դրա-ւոր ազգաբարոյականներ ուղարկելով Ընկերու-թեան նախագահին:

§ 27. Ընկ. ընդհ. ժողովը կազմվում է ժող-վին ներկայ գտնվող անդամներից նոյն ժողովի կողմէ ընտրված անձի նախագահութեան ներ-քոյ: Չը ներկայացող անդամները չեն կարող ընդհ. ժողովի նիստերը և դատողութիւնները դա-դարեցնել:

§ 28. Ընդհ. ժողովում, նրա նախագահի ա-ռաջնորդութեամբ, ընկնում են անցած տարվայ գործողութիւններն և կարգադրվում են, որքան կարելի է, նրա դիտաւորութիւններն ու դադա-փարներն (Постановления) ապագային համար: Ընկե-րութեան պարապմունքների չրջանից դուրս ա-ռաքականների մասին ընդհ. ժողովը դատողութիւն չէ անում:

§ 29. Ընկերութեան արդէն կատարված գոր-ծողութիւնների քննութեան ժամանակ առան-ձին ուշք է դարձնում Ընկերութեան գումար-ների պաշտպանելու և գործածելու կանոնաւորու-թեան վրա:

§ 30. Ընդհ. ժողովի նիստերի ժամանակ Ը-նկերութեան բոլոր անդամները, առանց զանա-զանութեան, հաւասար ձայն ունեն....

§ 33. Ընկերութեան գործունէութեան առաք-կաներին վերաբերվում են աղքատ հայերի եր-կու սեռի զաւակներին մէջ, իր կարողութեան չափով, տարածել բարոյական և մտաւորական կրթութիւն և քրիստոնէական բարեարարութիւն նրանց (հայերի) չքաւոր անդամներին:

§ 35. Ընկերութիւնը, հայ երիտասարդութեան մէջ կրթութիւնը տարածելու մասին հոգալով, իր խնամքի տակ է ընդունում այն ծնողների զաւակներին, որոնք իրանց չքաւորութեան պատճառով չեն կարող պատշաճաւոր դաստիա-րակութիւն տալ նրանց. ուսումնարաններում արդէն դաստիարակվող երիտասարդութեանը օգնում է ուսումնական, դրամական և այլատե-սակ նպաստներով. և օժանդակում է ստորին կրթողական դպրոցներում ուսման ընթացքը աւարտող աղքատ դասի աշակերտներին մտնել, իրանց ծնողների կամ խնամակալների ցանկու-թեան համաձայն, բարձրագոյն ուսումնարան-ներ:

§ 36. Ընկերութիւնը, կրթութեան գործի մէջ առանձին անձինքներին արած օգնութիւններից զատ, կարող է հիմնարկել և իր սեփական զըպ-րոցները սրա համար թոյլտուութիւն խնդրելով սահմանաւ կարգով:

§ 37. Ընկերութիւնը իր բարեգործութիւնը կարող է ցոյց տալ քրիստոնէական ոգովածու-թեան գործերի մէջ: Այս հիւժըի վրա նա օգնում է աղքատներին և տնայիններին դրամական նը-պաստներով, հիւանդներին ձրի բժշկութեամբ, թոյլատրված պարապմունքներ ձարկելով և տալով այն անձինքներին, որոնք պատուաւոր աշխատու-թեանը ապրուստ հայթայթելու համար գործ չեն գտնում:

§ 40. Ընկերութեան միջոցներն են. ա. հիմ-նական դրամաւորւթիւնը, որ բաղկացած է Ընկ-հիմնադիրների բարեգործական նպատակով նու-րած տան հազար վեց հարիւր թուրքուց. բ) Ը-նկերութեան անդամների միասնապէս և տարե-կան տուրքերը. գ) Ընկերութեան կազմութեանը չը պատկանեալ անձինքների դրամական նուէր-ներ. վերջապէս դ) չարժական ամեն տեսակ և անչարժ (անընթաց) ստացվածներ, որոնք մասնա-ւոր անձինքներից նուիրվում են յօդուած Ընկե-րութեան կտակներով, նուիրադրելով կամ այլ վկայականներով:

§ 41. Ընկերութիւնը բարեբար անձինքներից

նուիրված անընակ զեւոյններ, այգիներ և շէն-քեր ընդունում է կովկասեան փոխարքայի թոյլ-տութեամբ: Ընկերութիւնը իր օգտին նուիր-ված ստացվածները ընդունելիս ազատ է կալ-վածագրի հարկերից:

§ 55. Ընկերութիւնն ազատ է իր հաշիւները տէրութեան ատենաներին ներկայացնելուց, բայց առանձին կարեւորութիւն ունեցող դէպքերում Ընկերութեան բոլոր գործերը կարող են, կովկա-սեան փոխարքայի թոյլտուութեամբ, բացվել տէրութեան գործակալների առաջ:

Այս յօդուածներից յետոյ շատ խօսելիք չու-նեմ, որովհետեւ սրանք աւելի պերճախօս են և ազդու քան թէ իմ և այլոց երկար խորհրածու-թիւնները. մի քանի հարցեր կառաւարկեմ հա-սարկաց դատմունքին և կը վերջացնեմ.

1) Ռուսաստանի մէջ մտաւոր և բարոյական լոյս ծաւալելու համար մի ընդհանուր գործը ըն-կերութիւն լաւ է որ ունենանք թէ տեղական մասնաւոր ընկերութիւններ:

2) Բագուի «Մարզաս. Ընկերութիւնն» ընդու-նակ է այնքան զարգանալու, որ իսկապէս ընդ-հանուր նշանակութիւն ունենալ, թէ կարելի է և պէտք է հիմնել մի ուրիշ այլ սկզբունքների վրա:

3) Եթէ սա յարմար է զարգանալու ինչ մի-ջոցներ և հնարներ պատուաւոր ենք գործադրել սրան իր նպատակին հասցնելու:

4) Սա Բագու մնայ լաւ է թէ տեղափոխվի մի այլ քաղաք, և ուր:

Խնդրում եմ և կը յուսամ, որ այս հարցերիս պատասխանը հրապարակով տան շուտով մեր այն ազգայինները, որոնք համոզմունք ունեն, գիտակցաբար ըմբռնել են ազգի վիճակը և լուրջ կերպով են հոգում նրա մասին: Իսկ ևս համոզ-ված եմ, որ պէտք է զգուշանալ մեր սակաւ ոյժերը մասնատելուց, պէտք է հասկանանք, որ միացած գործիւններն աւելի սաստիկ են ներ-գործում քան ցրվածները. և վերջապէս պէտք է աշխատենք ունեցած պատրաստի կանօններին հոգի ներշնչել և կենդանացնել քան թէ նորե-րը կազմել և դարձեալ մեռած և անշունչ թող-նել:

Կապիւթի

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆԵ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

3 զեկեմբերի

Ազուխը կարծես թէ սկսում է կամայ կա-մաց ծաղկել, լուսաւորել, և ինչպէս առհասարակ ասում են, յառաջ մղել իր քայլերը լուսա-ւորութեան ասպարիզի մէջ միայն յաջողակ կեր-պով: Արդէն ունի նա այժմ երկուս. դպրոցներ եօթն ուսուցիչներով, մի հասարակաց ընթեր-ցարան և կունենայ շուտով մի ընկերութիւն, որի մասին արդէն «Մշակույթ» գրված էր և շատ այսպիսի օգտաւոր հիմնարկութիւններ, որոնց մասին մի աւ մի գրելու աւելորդ եմ համարում վերանայով, որ մի գուցէ ընթերցողը ձանձրա-նայ և այլ ևս չը կարգաւորի գրածները:

Չը նայելով այս բոլորին, Ազուխ ունի ևս մի քանի պակասութիւններ, որոնց վրա պէտք է սաստիկ ուշադրութիւն դարձնել: Առաջին և ամենապիտաւոր պակասութիւն-ներից մէկը մի հմուտ բժշկի կարեւորութիւնն է մեր գիւղում: Թէ որքան դուրի ենք մենք բը-ժշկից, այդ անկարելի է նկարագրել: Այստեղ բժշկութիւնը դաւաճանքի և նրանց հման ան-ձանց մօտ է, որ եթէ մէկը հիւանդանում է, (ինչ տեսակ հիւանդութիւն և լինէր նա), գնում են արին անունում, սե հաւը արթնում մէջքին կապում և հազար ու մէկ այս տեսակ պառտական բժշկութիւններ անում.... Մինչև այժմ յոյս ու-նէին, թէ բժիշկ ինչպէս ենք պայտեղ է և նա ամեն հիւանդին կը բժշկէ, ուստի և չէին հոգում այս մասին: Բայց չը գիտեմ այժմ ինչ պէտք է անեն քանի որ նա այստեղ է. Միթէ մենք դարձեալ պէտք է մնանք դաւաճանքի սկզբութեան ներքոյ, յանձնելով (ինչպէս մինչև այժմ արել ենք) մեր կիսները բաղդի բերուն-քին.... Այս մասին, որքան յիշում եմ, արդէն գըր-ված էր «Մշակույթ» մինչև անգամ և այն, որ ամեն մի տուն, եթէ չեն սխալվում, պատրաստ է երեսնական թուրքի վճարել մի սեփական բժիշկ ունենալու համար: Բայց թէ ուր են այդ պարունները և ինչ շինեցին, — այդ ոչ ոքին յայտ-նի չէ. յոյս ունեմ, որ իմ գրածը ևս չի մնայ («ձայն» բարբառոց յանապատ)»

Երկրորդ պակասութիւնը փոստի կայարան չունենալն է մեր գիւղում: Մինք նամակները սեփական սուրհանդակի ձեռքով Որդեպետից ենք ստանում, մեզանում փոստի կայարան չու-նենալու պատճառով: Սրա մասին էլ շատ է խօսեցված, բայց հարցը դարձեալ մնացել է լոկ հարց....

Երրորդ պակասութիւնը հեռագրական կայա-րան չունենալն է: Հեռագիրները միշտ մի հա-սարակ մարդու ձեռքով ուղարկում են Ձուլքի, այնտեղ հեռագրում և նոյնպէս այնտեղից ստանում: Սրա համար ևս շատ խօսեցին, մինչև անգամ իմ միտքս է որ բաժանորդական թերթ էին չինել և ամեն մարդու էին գրել տա-լիս, այդ բանը գտնել բերելու համար: Բայց ի-րաւորովից այդ... — Ինչու համար: — Որովհե-տե ազուխցին մի այնպիսի անպիտան բնութիւն

ունի, որ բոլորովին ճշմարտացունց է առածը (թէ թակիր երկաթը քանի որ տաք է), քանի որ մի քան նոր է սկսվում, նա տաք — տաք, ինչպէս մեզանում ասում են, կպչում է այդ գործին, իսկ երբ որ փոքր ինչ հնանում է, ուշանում է մի քանի ժամանակ, նա բոլորովին հովանում է, սառչում է... և այս է պատճառը, որ շատ բա-նեք մեզանում գրուի չեն գալիս և որ գլխաւորն է օդի մէջ են հիմնվում....

Եթէ այս վերի յիշած երեք պակասութիւնները ևս իրագործվեն, (անպատճառ հարկաւոր է դը-րանց իրագործել. մասնաւոր բժշկի վերաբը-րեալ), Ազուխը աւելի առաջ կերթար և իր զգալի օգուտները կունենար, թէ բարոյապէս և և թէ նիւթապէս:

Գողթնեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Ներկայ համարում տպված ԵՐԵՎԱՆԻ նամակի մէջ ասված է, որ տեղական թատրոնում ներ-կայացումներ տալու համար հարկաւոր եղած կարգադրութիւնների համար պէտք է հոգեւոր իշ-խատութեանը դիմել: Մեզ համար անհակադէմ է ինչ յարաբերութիւն կարող է ունենալ հոգեւոր իշխատութիւնը հայոց ժողովրդական թատրոնի հետ: Մեզ զարմացում է մեր նամակագրի ան-հեռատեսութիւնը: Աւելի լաւ չէր լինի եւրո-պայի տալ հասարակութեանը աշխարհական կառավարիչներ ընտրել թատրոնի համար, իսկ հոգեւորականներին թողնել, իրանց (սոսնար-նեց) և «ապրեցող-ով» զբաղվել: Երևանի թատ-րոնի մէջ գուցէ մի ժամանակ կը խաղացվին Օֆէնբախի օպերաները անփախելի կանկա-նով, հոգեւորականների ինչ գործն է դրանց մաս-նակցելը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԲԱՆՍԻԱ

«Europe diplomatique» լրագրին հայոր-դում են, որ պ. Տիստոն, որ այժմ Աթէնքում, Պրանսիական միւնիստ է, հրաման ստացաւ, որ շուտով գնայ Կ. Պօլիս Փրանսիական դեսպանութեան պաշտօնը ժամանակաւորապէս վարելու, որովհետեւ այդ քա-ղաքի դեսպան պ. Ֆուրիէն այժմ Պրանսիա է: Պարսկ Գաւրիէն Պրանսիա է վերադարձել, որպէս զի Էնդրէ-Լուար նահանգի սենատորա-կան ընտրութեանը մասնակցի, որտեղ նա գալ յունվարի 5-ի ընտրութեան հանրապետական կանկիղատ է նշանակված:

Մէն նահանգապետ, ասում է «Temps» լրագիրը, զեկտեմբերի 3-ի կանոնադրութեան համաձայն ինդրից, որ Մէն նահանգի վաճա-ռականական ժողովի անդամները ժողովին նոր անդամներ ընտրելու: Ընտրութիւնները կը սկսվեն զեկտեմբերի 19-ին:

Պրանսիական քանդակագործութեան ժու-ղովը կառավարութեան մի հրովարտակով ձանաչվեցաւ իբրեւ հասարակութեան օգ-տակար հիմնարկութիւն:

Պրանսիական ձեմարանը իր անցեալ նրա-տում մի նամակ ստացաւ պ. Գուքս Օրլէնէ-Պակիէից, որ անկարկում է նորին արեւելու-թեան հանգուցեալ Նիւպանուէ տեղը ստա-նալու:

«Evenement» լրագիրը ասում է որ պ. Բորդի, որ Օպերայի ներքնատեսիկների նկա-րիչ է, Վիկտոր Հիւգօին պատուեց մի գոր-չազոյն նկարով, որը ներկայացնում է Եւայի քուշը: Պատմում են, որ այդ նշանաւոր ար-տիստը նկարել է այդ պատկերը Վիկտոր Հիւգօի մի նկարագրութեան աղբեցուցումը:

Բորդի լրագիրները յայտնում են, որ Ժի-րօնի գլխաւոր ժողովը նախագահ պ. Սօփօ-նը լուսաւորութեան միւնիստրութիւնից մի մեծ ուկէ մեղալ ստացաւ Միւնիստրութիւնը կրան շնորհեց այդ մեղալը դրա աշխարհագրութիւն ուսուցանելու մեթօդի և իր աշխարհագրա-կան բոլոր աշխատասիրութիւնների համար:

ՄՇԱԿԻ ՆԵՐԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 զեկտեմբերի: Պետա-կան բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ռ. 50 Կ., երկրորդ 94 ռ. 75 Կ., երրորդ 94 ռ. 50 Կ., չորրորդ 94 ռ. 75 Կ., ներքին 50% տոմսեր փոխառութեան տոմ-սակը արժէ 237 ռ. 25 Կ., երկրորդ 232 ռ. 50 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 927/8 ռ. երկրորդ 913/8 ռ., ոսկին 8 ռ. 58 Կ.: Ռուսաց 1 թուրք Լօնդօնի վրա արժէ 2215/16 պֆեն, ռուսաց 100 ռ. Վեր-մանիայի վրա 196 մարկ, Փարիզի վրա 241 ֆր. 50 սանտիմ: Տրամադրութիւնը ամբողջ է:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ